



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝  
«ԱՐԽԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱՐԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՄԻՆԱՍՅԱՆ

«23» 05 2017թ

# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ  
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 49

Ձեռնարկողը՝

«ԳԵՈՌԵՅԴ» ՓԲԸ

Ք Երևան Հ. Բոյսր Բ, րև 16

Գործունեությունը՝

Մուցքի ոսկի-բազմամերադային հանքերևակման շրջանում  
2017-2019թթ. ընթացքում կարարվելիք երկրաբանական  
ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի  
վրա ազդեցության նախնական գնահատման հայտ  
«Այունիքի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության  
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի  
տնօրեն՝



Վ. Սահակյան

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 49

<<23>> 05 2017թ.

**«Սյունիքի մարզի Մուցքի ոսկի-բազմամետաղային հանքերևակման շրջանում 2017-2019թթ. ընթացքում կատարվելիք երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ»**

Ձեռնարկող՝	<<ԳԵՈՌԵՅԴ>> ՓԲԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ և կից փաստաթղթեր
Գործունեության կատեգորիա՝	<<Գ>>
Գտնվելու վայրը՝	ՀՀ Սյունիքի մարզ

«Սյունիքի մարզի Մուցքի ոսկի-բազմամետաղային հանքերևակման որոնողական աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը մշակվել է շրջակա միջավայրի հնարավոր բացասական ազդեցությունները կանխարգելելու, նվազեցնելու և գործունեության ազդեցության վերաբերյալ պարբերաբար տեղեկատվություն ստանալու նպատակով:

Մուցքի ոսկի-բազմամետաղային հանքերևակումը գտնվում է «Սյունիքի մարզում, Մուցք գյուղից հարավ-արևելք, Սալվարդ սարի հարավ-արևելյան լանջին, Շաղատ գետի ավազանի միջին հոսանքում:

2017-2019թթ. ընթացքում «Սյունիքի մարզի Մուցքի ոսկի-բազմամետաղային հանքերևակումում որոնողագնահատողական աշխատանքների ծրագիրը կազմված է «ԳԵՈՌԵՅԴ» ՓԲԸ-ի նախաձեռնությամբ և ֆինանսական միջոցներով:

Ծրագրով նախատեսվում է 2017-2019թթ. ընթացքում Մուցքի երևակման սահմաններում կատարված աշխատանքների արդյունքներով տալ տեղամասի հեռանկարային գնահատականը և հիմնավորել մանրազնին հետախուզական աշխատանքների նպատակահարմարությունը:

Որոնողահետախուզական աշխատանքները կիրականացվեն սյունակային հորատման միջոցով նմուշարկման զուգորդմամբ: Կկատարվեն լաբորատոր և տուպո-մարկշեյդրական աշխատանքներ:

Համաձայն ծրագրի աշխատանքների սկիզբը նշված է 2017թ 3-րդ եռամսյակ, իսկ աշխատանքների ավարտը՝ 2019թ 2-րդ եռամսյակ:

Հանքերևակումը գտնվում է Սիսիան քաղաքից 28կմ հեռավորության վրա, Երևան քաղաքի հետ կապվում է 180կմ ասֆալտապատ և 18կմ գրունտային ճանապարհով: Տարածքով հոսում է Շաղատ գետն իր Բեգիմյաննայա և Գիժ վտակներով:

պրագմա ՏԵԿ օրինակով





Տեղումների միջին քանակը կազմում է 500-600մմ: Ամենացածր ջերմաստիճանը դիտվում է հունվար ամսին՝  $-10^{\circ}\text{C}$  –ից  $-12^{\circ}\text{C}$ , ամենաբարձրը հուլիսին  $+16^{\circ}\text{C}$  –ից  $+18^{\circ}\text{C}$ :

Շրջանի բուսականությունը և կենդանական աշխարհը բնորոշ են ալպիական և բարձր լեռնային լանդշաֆտային գոտիներին: Շրջանը մտնում է 7-8 բալանոց սեյսմիկ գոտու մեջ ըստ Ռիխտերի 12 բալանոց սանդղակի:

Բացարձակ բարձրությունը տատանվում է 1900-2250մ:

Շրջանը բնորոշվում է աղքատ կենդանական աշխարհով: Հանդիպում են գայլ, աղվես, նապաստակ, փորսող, դաշտամկներ, մողեսներ, լորտու օձ, դողոշ: Թռչուններից հանդիպում են ճնճուկ, լոր, կաքավ, կաչաղակ և բազե: Տեղանքը զուրկ է անտառածածկույթից:

Բնակիչները զբաղված են անասնապահությամբ և հողագործությամբ: Որոնողագնահատողական աշխատանքների տարածքը կազմում է 600հա:

2017-2019թթ. հանքերևակումում նախատեսվող աշխատանքների նպատակը կայանում է հետևյալում՝ Շաղատ գետի վտակ Բեզիմյաննա գետակի աջ ափին կատարել հորատման աշխատանքներ հանքային մարմինը ըստ տարածման և խորության եզրագծելու և ուսումնասիրելու համար, հետագայում մանրակրկիտ երկրաբանական հետախուզություն կատարելու նպատակով:

Դաշտային աշխատանքների կատարման համար անհրաժեշտ է վերականգնել նախկինում եղած ճանապարհները: Բացի հիմնական ճանապարհներից, անհրաժեշտ է կառուցել հորատահրապարակներ և նրանց մոտեցման ճանապարհներ:

Նախատեսվում է հորատել թվով 23 հորատանցք, դա նշանակում է, որ պետք է կառուցել 23 հորատահրապարակ: Այդ հորատահրապարակներին մոտենալու համար անհրաժեշտ է կառուցել մոտեցման ճանապարհներ: Յուրաքանչյուր հորատահրապարակին մոտեցման ճանապարհը միջինում կազմում է 200քմ: Կառուցվող ճանապարհների ընդհանուր ծավալը կլինի՝ 3358մ<sup>3</sup>:

Հորատահրապարակները միևնույն ժամանակ հանդիսանալու են բեռնաթափման և շրջադարձի տեղեր: Հորատումը նախատեսվում է կատարել RC-500 տիպի հաստոցով:

Ելնելով հաստոցի երկարությունից հորատահրապարակի երկարությունը ընդունվում է 15մ, իսկ լայնությունը 8մ: Ինժեներաերկրաբանական հետազոտություններով նախատեսվում է պարզել՝ հանքերևակման ապարների զանգվածների առանձնահատկությունները, ճեղքավորությունը, կազմը, կառուցվածքային յուրահատկությունները:

Նախատեսվում է կատարել հանքային մարմինն ներփակող և պարփակող ապարների ֆիզիկամեխանիկական հատկությունների ուսումնասիրություն, որով կորոշվի նրանց կայունությունը բնական պայմաններում:

Հիդրոերկրաբանական հետազոտություններով նախատեսվում է պարզել.

- Հանքային հորիզոնները ջրարփի դարձնող հիմնական ջրատար հորիզոնները, ջրի որակը, կատարել ռեժիմային դիտարկումներ:

Որոնողական աշխատանքները նախատեսվում է իրականացնել հորատման միջոցով: Հետախուզման նման եղանակը շրջակա միջավայրի վրա բնապահպանական տեսակետից կունենա թույլ ազդեցություն: Հետախուզական աշխատանքները նախատեսվում են իրականացնել հաշվի առնելով ընդերքի և շրջակա միջավայրի պահպանության մասին ՀՀ օրենսդրության պահանջները: Հետախուզական աշխատանքների ընթացքում շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված նախատեսվել են հետևյալ միջոցառումները:

• Հանքերևակումում և ավտոճանապարհների վրա մթնոլորտային օդի մաքրության պարբերաբար հսկողություն:

• Փոշեզրկման նպատակով արտադրական գոտիներում (հորատահրապարակներ, ճանապարհներ) ջրման աշխատանքների իրականացում:





• Օգտագործվող ագրեգատները աշխատեցնել սարքին վիճակում՝ վնասակար գազերի գերնորմատիվային արտանետումները բացառելու նպատակով:

Հետախուզության ժամանակ թափոնակույտեր չեն առաջանա և լրացուցիչ տարածքներ չեն զբաղեցվի: Ստորև բերվում է բնապահպանական միջոցառումների ծրագիրը:

Հորատահրապարակների և մոտեցման ճանապարհների կառուցման ժամանակ նախատեսվում է կատարել հողի բերրի շերտի հանում և պահպանում հատուկ առանձնացված վայրում հետագա ռեկուլտիվացիայի համար:

Հնարավորության դեպքում կիրականացվի նաև տվյալ տարածքի էնդեմիկ թիթեռնածաղկավորների ու հացազգի խոտախառնուրդի ցանքի միջոցով ճիմի առաջացում, ինչը կբարձրացնի հողի հակաէրոզիոն հատկությունները: Էրոզիայի առաջացումը կանխելու նպատակով ճանապարհների եզրերին կկատարվի դարավանդավորում: Դա կանխում է հողատրորումը, նպաստում ջրաջերմային ռեժիմի կարգավորմանն ու բուսականության լավ աճին:

Հնարավորության դեպքում նախատեսվում է օգտագործել միայն գոյություն ունեցող ճանապարհները՝ խուսափելով նոր ճանապարհների անցումից, որը թույլ կտա նվազեցնել հողերի խախտումը:

Տրանսպորտային միջոցների աշխատանքի ժամանակ հնարավոր է ծխագազերի և անօրգանական փոշու արտանետումներ, որոնց նվազեցման համար նախատեսվում է իրականացնել մեքենաների տեխնիկական վիճակի նախնական և պարբերական ստուգումներ, շարժիչների աշխատանքի կարգավորում, արտանետման խողովակների վրա գտիչների տեղադրում:

Օգտագործված յուղերից, վառելիքի թափվածքից, հորատման պոլիմերային լուծույթից հողերի աղտոտումը կանխելու նպատակով նախատեսվում է դրանք կուտակել անջրաթափանց տակառներում: Հողերի աղտոտումը կանխելու նպատակով նախատեսվում է տարեկան երկու անգամ իրականացնել հողերի նմուշառում:

Հետախուզական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է հորատահրապարակների տարածքի ռեկուլտիվացիա: Այդ նպատակով իրականացվելու է հորատահրապարակների և մոտեցման ճանապարհների հարթեցում, որից հետո կատարվելու է նախապես հատուկ վայրերում պահեստավորված (պոլիէթիլենային թաղանթով ծածկված, որը կբացառի հողերի տարրալվացում, հողմնահարում) հողի բերրի կամ պոտենցիալ բերրի շերտի փոում, ճմապատում:

Նշված աշխատանքների համար շրջակա միջավայրի պահպանության դրամազլխին կատարվելու են հատկացումներ ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:

**Եզրահանգումներ.** Ուսումնասիրությունների ընթացքում ազդեցությունները լինելու են ժամանակավոր, տեղային, թույլատրելի նորմերի սահմաններում: Նախատեսված են մի շարք բնապահպանական միջոցառումներ, որոնք կնվազեցնեն գործունեության ազդեցությունը շրջակա միջավայրի բաղադրիչների վրա:

Օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հասարակայնությունը հավանություն են տվել նախագծի իրականացմանը:

### Փորձաքննական պահանջներ

1. Մինչ գործունեության իրականացումն անհրաժեշտ է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ստանալ համապատասխան համաձայնություններ և թույլտվություններ:



2. Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում պարբերաբար իրականացնել հողի, ջրի, օդի վերահսկման աշխատանքներ, և արդյունքները ներառել մոնիտորինգի պլաններում:
3. Երկրաբանական ուսումնասիրության ընթացքում առաջացած շինադրի (կենցաղային ադրի), հեռացումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<ԳԵՈՌԵՅԴ>> ՓԲԸ կողմից ներկայացված ՀՀ Սյունիքի մարզի Մուցքի ոսկի-բազմամետաղային հանքերևակման շրջանում 2017-2019թթ. ընթացքում կատարվելիք երկրաբանական ուսումնասիրության՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն, վերը նշված փորձաքննական պահանջներիի պարտադիր կատարման պայմանով:

Մասնագետ՝



Ձ. Զուռնայան